

## СОЦИОЛОГИЯ

# ՀՀ երիտասարդների սոցիալական ադապտացիան հետպատերազմյան իրականությունում. սոցիոլոգիական վերլուծություն<sup>1</sup>

Փարայան Մարինա Վ.

*Երևանի պետական համալսարան, Սոցիոլոգիայի ֆակուլտետ, հետազոտող (Երևան, ՀՀ)*  
galstyanmarina@gmail.com

ՀՏԳ՝ 316; EDN: WTGSFR; DOI: 10.58587/18292437-2023.1-23

Հանգուցաբառեր՝ երիտասարդության սոցիոլոգիա, ադապտացիա, երիտասարդների սոցիալական հարմարում, երիտասարդների անկախություն, երիտասարդները և պատերազմը

## Социальная адаптация молодежи РА в послевоенной действительности: социологический анализ<sup>2</sup>

Галстян Марина К.

*Исследователь, Ереванский Государственный Университет, факультет Социологии (Ереван, РА)*  
galstyanmarina@gmail.com

**Аннотация.** В статье рассматриваются проблемы и особенности адаптации молодежи РА в кризисных ситуациях. Социальная адаптация является в центре изучения из ряда научных направлений. В статье дана общая характеристика и основные подходы, изучающие социальной адаптации (Пиаже, Спенсер, Парсонс, Мертон, Тоффлер) с целью представить развитие научного понимания социальной адаптации. Цель работы – оценить уровень адаптации молодежи в социально-экономической сфере в послевоенной действительности и выделить факторы, связанных с послевоенными условиями, влияющие на социальную адаптацию молодежи. Социологическое осмысление социальной адаптации позволяет выявить, какие адаптационные модели использовала молодежь в послевоенной действительности. Доминирующими моделями являются депривационного и мимикрического типа. У студентов и работающей молодежи доминантным является компенсаторный тип адаптации. Тема, обсуждаемая в статье, может стать основой для разъяснения ряда проблем и принятия решений о о современной молодежи в Армении.

**Ключевые слова:** социология молодежи, адаптация, социальная адаптация молодежи, независимость молодежи, молодежь и война

## Social adaptation of Armenian youth in the post-war reality. Sociological analysis<sup>3</sup>

Galstyan Marina K.

*Researcher at Yerevan State University, Faculty of Sociology (Yerevan, RA)*  
galstyanmarina@gmail.com

**Abstract.** The problem and features of adaptation of Armenian youth in crisis situations is represented in the article. In the frames of the article the main theoretical concepts on social adaptation are discussed (Piaget, Spencer, Parsons, Merton, Toffler). In the meantime, necessary parallels are drawn between psychological and sociological approaches of social adaptation. The article presents the meaning the definitions of social adaptation. The aim of the article is to point out the level of adaptation of young people in the socio-economic sphere in the post-war reality and to highlight the influence of factors related to post-war conditions on the social adaptation of young people. The sociological understanding of social adaptation makes it possible to discover what adaptation models young people have used in the post-war reality. Deprivation and imitative type adaptations are among the dominant models: deprivation and imitative type adaptations are mostly common among unemployed, war-participating youth. And among students, employed young people, a compensatory type of adaptation is noticeable. The topic can be considered as a base for clarifying and solving a number of current issues on youth in Armenia. It is also helpful for political decision-making process.

**Keywords:** sociology of youth, adaptation, social adaptation of youth, youth independence, youth and war

<sup>1</sup> Հոդվածը պատրաստվել է ՀՀ Գիտության կոմիտեի «ՀՀ երիտասարդների հարմարվողականությունը հետպատերազմյան և հետհամալսարանական պայմաններում» 20RF-172 ծրագրի շրջանակներում:

<sup>2</sup> Статья подготовлена в рамках программы 20RF-172 Комитета науки РА "Адаптация молодежи РА в послевоенных и постпандемических условиях".

<sup>3</sup> The article was prepared within the framework of the 20RF-172 program of the RA Science Committee "Adaptation of RA youth in post-war and post-COVID conditions".

## Ներածություն

Երիտասարդության վերաբերյալ առաջին և հիմնարար սոցիոլոգիական աշխատություններում երիտասարդությունը սահմանվում է որպես տարիքային խումբ, ընդ որում ինչպես նշում է երիտասարդության սոցիոլոգիայի հեղինակներից մեկը՝ տարիքը և տարիքային տարբերությունները մարդու կյանքի ամենահիմնարար և նշանակալի ասպեկտներն են, մարդկային ճակատագրի պայմանավորող գործոնները [13, էջ 21]: 2020 թ. պատերազմական գործողությունները «Երիտասարդությանը կանգնեցրին նոր մարտահրավերների և ճգնաժամերի առաջ: Երիտասարդության սոցիոլոգիային, երիտասարդական ուսումնասիրություններին վերաբերող ակադեմիական գրականությունը ընդգծում է պատերազմների նշանակալի ազդեցության մասին երեխաների և երիտասարդների կյանքի վրա [15]: Հետևաբար, արդիական է դառնում ուսումնասիրել և հասկանալ ճգնաժամային իրավիճակներում «Երիտասարդության ադապտացիայի հիմնախնդիրը»<sup>1</sup>:

Երիտասարդների վերաբերյալ տեսական մոտեցումները չունեն միասնական մոտեցում երիտասարդություն հասկացության սահմանման շուրջ: Երիտասարդության վերաբերյալ տեսական մոտեցումները բաժանվում են հետևյալ հինգ ուղղությունների՝ զարգացման հեռանկար, սերնդային հեռանկար, կառուցվածքային կոնֆլիկտի հեռանկար, անցումային հեռանկար, կառուցվածքաբանական հեռանկար [12]: Քանի որ հոդվածը հիմնվելու է երիտասարդության անցումային հեռանկարի վրա, նշենք, որ այն ձևավորման սկզբում՝ 1970-ական թթ. սկզբում, հիմնականում շեշտադրում էր դպրոցից աշխատանքի անցման ասպեկտը, սակայն հետագայում այն ընդլայնվեց և սկսեց անդրադառնալ երիտասարդների կյանքի ավելի լայն շրջանակներին, այդ թվում նաև ճգնաժամային և ռիսկային իրավիճակների կառավարմանը: Անցումային մոտեցման մեկնաբանմամբ երիտասարդությունը որպես մանկության կախվածությունից դեպի անկախության անցման փուլ ուղեկցվում է մարտահրավերներով և ճգնաժամերով [11]:

### Հետազոտության նպատակը և մեթոդաբանությունը

Հետազոտության նպատակն է գնահատել հետպատերազմյան իրականությունում սոցիալ-տնտեսական ոլորտում երիտասարդների ադապտացիայի մակարդակը և վերհանել հետպատերազմյան պայմանների հետ կապված

գործոնների ազդեցությունը երիտասարդների սոցիալական ադապտացիայի վրա:

Հետազոտության նպատակին ուղղված կիրառվել են տեղեկատվության հավաքագրման հետևյալ մեթոդները՝

- ակադեմիական գրականության ուսումնասիրություն,

- վիճակագրական տվյալների ուսումնասիրություն,

- խմբային քննարկումներ և անհատական հարցազրույցներ երիտասարդների, ինչպես նաև փորձագետների շրջանում, ընդհանուր առմամբ՝ 6 խմբային քննարկում և 20 հարցազրույցներ: Իրականացվել են հարցազրույցներ և խմբային քննարկումներ երիտասարդների տարբեր խմբերի հետ, ընդ որում ինչպես Երևանում, այնպես էլ մարզերում՝ գործազուրկ երիտասարդներ, ուսանողներ, պատերազմի մասնակից երիտասարդներ, զբաղված երիտասարդներ:

Հետազոտությունն իրականացվել է 2022 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին:

### Ադապտացիայի մեկնաբանման տեսական մոտեցումները

Գիտության մեջ «սոցիալական ադապտացիա» հասկացությունը կիրառվում է վաղուց: Դրա կիրառման շրջանակը չի սահմանափակվում կոնկրետ գիտական գիտելիքի որևէ ոլորտով: Հասկացությունը ի սկզբանե շրջանառության մեջ է դրվել կենսաբանության և սոցիալական հոգեբանության մեջ, այնուհետև փիլիսոփայության կիրեռնետիկայի, սոցիոլոգիայի և էկոլոգիայի և այլ գիտակարգերում: «Ադապտացիա» հասկացությունը հայեցակարգային իմաստը ստացել է *Էվոլյուցիայի տեսությունից* [22, էջեր 282-292]: Կենսաբանության ազդեցությամբ՝ ադապտացիայի հայեցակարգը դրվեց *հոգեբանական ադապտացիայի* հիմքում: Հոգեբանական տեսությունների մեծ մասի շրջանակներում ադապտացիայի գործընթացը դիտվում է որպես անձի և շրջակա միջավայրի միջև որոշակի հարաբերությունների հաստատում: Այն սահմանվում է որպես մարդու և անընդհատ փոփոխվող աշխարհի միջև չդադարող փոխազդեցության գործընթաց, որի ներսում նա զարգանում է: Այն նման է բարդ դինամիկայի, որը արտահայտում է սուբյեկտի տարբեր գործողությունները, ինչպես նաև տարբեր գործընթացները, որոնք հնարավորություն են տալիս վերափոխման հեռանկարների առաջացմանը [16, էջեր 247-250]: Այդ գործողությունները և գործընթացները թարմացվում են տեղեկատվության մշակման և որոշումների կայացման գործընթացով, սուբյեկտին տալով հնարավորություն հարմարվելու նոր իրավիճակներին [24]:

Հոգեբանության մեջ ադապտացիայի սահմանումը որպես մարդու և անընդհատ փոփոխ-

<sup>1</sup> Հոդվածում «ադապտացիա» հասկացությունը համարժեք է անգլերեն adaptation տերմինին, որը հայերեն գիտական գրականության մեջ կիրառվում է «ադապտացիա», «հարմարում», «հարմարվողականություն»:

վող աշխարհի միջև չդադարող փոխազդեցության գործընթաց հիմք հանդիսացավ Ժ. Պիաժեի ճանաչողական (կոգնիտիվ) զարգացման տեսության համար: Ըստ Ժ. Պիաժեի՝ ճանաչողության ընթացքում երեխան մի կողմից հարմարվում է իրականությանը (հարմարեցնում է իր գիտակցության սխեմաները), իսկ մյուս կողմից՝ իր ճանաչողական սխեմաները տարածում է իրականության վրա [20]: Համաձայն հարմարման **ինտերակցիոնիստական հայեցակարգի**, ադապտացիայի բոլոր տեսակները պայմանավորված են ինչպես ներհոգեբանական, այնպես էլ շրջակա միջավայրի գործոններով: Լ. Ֆիլիպսը արդյունավետ ադապտացիա էր սահմանում այն ադապտացիան, որին հասնելուց հետո անհատը բավարարում է հասարակության նվազագույն պահանջներն ու ակնկալիքները [19]:

Հոգեբանության մեջ առանձնացվում է անհատի 3 տեսակի ադապտացիա՝

- նորմալ ադապտացիա,
- ոչ կոնֆորմիստական ադապտացիա,
- պաթոլոգիական ադապտացիա [4]:

Ադապտացիայի **սոցիոլոգիական տեսությունները** և ինտեգրման սոցիոլոգիական վերլուծությունը փոխրացնող են և մասնակցում են «ադապտացիա» հասկացության հարստացմանը ավելի ընդհանուր իմաստով: 19-րդ դարի սոցիոլոգիան, կրելով կենսաբանության ազդեցությունը, ունեցավ նաև էվոլյուցիոնիզմի դրոշմներ, որը փնտրում էր և ուսումնասիրում սոցիալական փոխակերպումների ծագման օրենքները: Էվոլյուցիա հասկացությունը սոցիոլոգիա բերեց անգլիացի փիլիսոփա, հոգեբան, սոցիոլոգ, պոզիտիվիզմի հիմնադիրներից Հ. Սպենսերը: Էվոլյուցիա ասելով՝ նա հասկանում է անորոշ, անկապ միատարրությունից անցումը որոշակի, փոխկապակցված բազմատարրության:

1950-ական թթ. արդեն Թ. Պարսոնսը գործողության իր տեսության շրջանակներում զարգացրեց ադապտացիայի գործառույթը: Ըստ Պարսոնսի անհատի գործողությունը համակարգ է: Նա առաջարկեց չորս ֆունկցիոնալ իմպերատիվներ, հրամայականներ, որոնք անհրաժեշտ են համակարգի ստեղծման և գործունեության համար՝ **A-G-I-L սխեման**: Ադապտացիան (A-Adaptation) վերաբերում է արտաքին միջավայրի հետ հարաբերություններին և նպատակներին հասնելու համար ռեսուրսների օգտագործմանը, խոսքը համակարգի հարմարվողականության մասին է, այդ գործառույթը համակարգում կատարում է տնտեսական ենթահամակարգը, որը ապահովում է ռեսուրսների արդյունավետ օգտագործումը: Նպատակին (G-goal) հասնելը վերաբերում է համակարգերի ուղղորդմանը դեպի հավաքական նպատակներ, որի համար պա-

տասխանատու է քաղաքական ենթահամակարգը: Ինտեգրումը (I-Integration) վերաբերում է համակարգի մասերի միջև համակարգված հարաբերությունների պահպանմանը, հապադումը (L-Latency) կամ թաքնված մշակութային օրինակի, մոդելի պահպանումը նկարագրում է խորհրդանիշների կարգը՝ փոխադարձաբար ամրապնդող իմաստների և տիպավորումների առումով [18]:

Ըստ Ռ.Մերտոնի, **անհատական** սոցիալական հարմարման խնդիրը ակտուալացվում է անոմիայի պայմաններում, ինչն արդյունք է հասարակության արժեքային-նորմատիվ համակարգի տարբեր տարրերի միջև անհամապատասխանության, բախման՝ մշակութային ձևով սահմանված համընդհանուր նպատակների և դրանց հասնելու ինստիտուցիոնալ միջոցների միջև: Դիտարկելով հասարակության նորմատիվ կառուցվածքը, այսինքն՝ նորմերի, դերերի, կարգավիճակների, արժեքների և ինստիտուցիոնալ կարգերի միջև հարաբերությունների կառուցվածքը և դրան հարմարվելու եղանակները, Մերտոնը ցույց տվեց, որ այդ բաղադրիչների միջև հարաբերությունները կարող են լինել համաձայնեցված և ոչ համաձայնեցված, նույնիսկ կոնֆլիկտային [7]: Կառուցվածքային անոմիային անհատական հարմարվողականության տեսակները Մերտոնը դասակարգում է «մշակութային նպատակների» (մշակույթի կողմից սահմանված արժեքների) և «ինստիտուցիոնալացված միջոցների» (նորմերի) տարբերակման հիման վրա: Այսինքն՝ սոցիալական հարմարման գործընթացում մարդը կարող է ընդունել կամ մերժել արժեքները, հետևել նորմերին կամ շեղվել դրանցից:

Ըստ այդ մոտեցման Մերտոնն առանձնացնում է վարքի կամ հարմարման հետևյալ տեսակները՝ **կոնֆորմիզմ, նորարարություն, ռիտուալիզմ, փախուստ իրականությունից, ապաստանքություն** [7]:

Սոցիալական ադապտացիայի հիմնախնդիրը ուսումնասիրվել է նաև ամերիկացի ֆուտուրոլոգ և սոցիոլոգ Է. Թոֆլերի կողմից: Է. Թոֆլերը ձևակերպեց սոցիալական հարմարվողականության խնդիրը տեղեկատվական կամ գիտելիքի հասարակության համատեքստում: Թոֆլերը խոսում էր երրորդ ալիքի մասին, որը ամբողջությամբ կփոխի ապագայում հասարակության սոցիալական կարգը: Ըստ Թոֆլերի, մարդիկ պատրաստ չեն լինի փոփոխություններին, որոնք տեղի կունենան իրենց առօրյա կյանքում, նրանք կզգան, այսպես կոչված, ապագայի շոկ՝ ֆուտուրաշոկ (տերմին, որը ներմուծել է Է. Թոֆլերը համանուն աշխատության մեջ, որը հրատարակվել է 1970 թվականին): «Մենք կարող ենք ապագայի շոկը սահմանել որպես տառապանք, ֆիզիկական և հոգեբանական,

որը բխում է այն գերծանրաբեռնվածությունից, որն անցնում է մարդու մարմնի հարմարվողական համակարգերը ֆիզիկապես, իսկ որոշումների կայացման համակարգերը՝ հոգեբանորեն: Պարզ սասած, **ապագայի շոկը** մարդու կամ հասարակության արձագանքն է ծայրահեղ նյարդային գրգռվածությանը» [9]: Նման անհամապատասխանությունը առաջանում է միջավայրի արագ և արմատական փոփոխություններից, հատկապես իրադարձությունների արագ, աճող ճնշումից, գիտելիքի, գիտության, տեխնոլոգիայի և տարբեր տեսակի տեղեկատվության հոսքից:

Այսպիսով, ներկայացնենք սոցիալական ադապտացիայի սահմանումը, որը հիմք է հանդիսացել հետազոտության համար:

**Սոցիալական ադապտացիան** սոցիալական համակարգի (անհատ, սոցիալական խումբ, կազմակերպություն, ինստիտուտ և այլն) հարմարվողականության վիճակն է կամ գործընթացը արտաքին և ներքին փոփոխություններին, որոնք տեղի են ունենում սոցիալական պրակտիկաների, արժեքների, ինչպես նաև գործառույթների և կառուցվածքի փոփոխության ճանապարհով [6, էջ 39]:

Ըստ խորության, առանձնացնում են **խորը և մակերեսային ադապտացիա** [6, էջ 118]:

Խորը ադապտացիայի դեպքում հարմարվողի մոտ տեղի են ունենում խորքային փոփոխություններ՝ արժեքների, նպատակների, արտաքին աշխարհի հետ փոխազդեցության միջոցների և այլն:

Մակերեսային ադապտացիայի դեպքում հարմարվողի մոտ տեղի են ունենում ոչ նշանակալի փոփոխություններ:

Խորը ադապտացիան ենթադրում է անդարձելիություն նախնական կետին, իսկ մակերեսային ադապտացիայի դեպքում հնարավոր է վերադառնալ վարքի հին ձևին՝ վերահարմարվել:

Սոցիալական ադապտացիայի մեկ այլ տիպաբանություն ևս արդիական է այս հետազոտության արդյունքների մեկնաբանման համար: Ըստ հարմարվողի նախկին, ավանդական նպատակների և արժեքների պահպանման՝ status quo-ի պահպանման, ադապտացիան լինում է երեք տիպի՝ **փոխհաստուցող, նմանակող/ընդօրինակող, դեպրիվացիոն** [7, էջ 140]:

Փոխհաստուցող ադապտացիան փոփոխվող միջավայրին հարմարվելու այն տեսակ է, որի դեպքում միանում են հարմարվողի գործառնության փոխարացնող ռեժիմները: Օրինակ, երբ երիտասարդը բացի իր հիմնական զբաղվածությունը, զբաղվում է (փոխարացնում է) այլ եկամտաբեր աշխատանքով ևս, որպեսզի ապահովի իր հիմնական կարիքները:

Ընդօրինակող կամ նմանակող ադապտացիայի հիմքում սոցիալական նմանակման գաղափարն է, երբ սոցիալական որևէ խմբի համար

ստեծվել են անելանելի իրավիճակներ և նրանք օգտագործում են պաշտպանական բազմաթիվ միջոցներ՝ փոխելով իրենց վարքը արտաքինապես, սակայն պահելով ավանդական և անփոփոխ նպատակադրումները և արժեքները:

Դեպրիվացիոն ադապտացիան ենթադրում է հավակնությունների մակարդակի իջեցում, հարմարվողի ներքին կառուցվածքի՝ նպատակների և արժեքների պարզեցում:

**Հետազոտության արդյունքների վերլուծություն**

Ինչպես նշում էր Թոֆլերը, ապագայի վերաբերյալ անորոշությունը կամ ապագայի շոկը առաջանում է իրականության և մարդու մտքում իրականության պատկերի միջև անհամապատասխանությամբ (քանի որ մարդը չի հասցնում, ժամանակ չունի հարմարվելու նոր կենսապայմաններին) [9]: Պատերազմական գործողությունները իրական մարտահրավեր են հենց այդ անհամապատասխանության ստեղծման, քանի որ դեպքերը և իրադարձությունները կարող են ընթանալ անհատի համար անկանխատեսելի ձևով: Հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ պատերազմի առաջին օրերին երիտասարդները զգացել են նման շոկ:

*Բնականաբար տազնապային [զգացողություն ունեի], պատերազմի առաջին օրերին սկսնկարում էինք, որ քառօրյայի նման շուտ կվերջանա, բայց անընդհատ երկարեց, և կորուստները, այսինքն պատերազմին՝ մարդկանց մասնակցության թվաքանակի մեծությունը, հետո ռազմական դրությունը և այլն, մասնավորապես, երբ ընտանիքից ունենում ես մարդ, որ կամավոր մեկնում է ռազմաճակատ ու ունես հարազատներ, որ արդեն ռազմաճակատում են : Մի խոսքով սա շատ սթրեսային էր: Դրա համար ես իմ մասով փորձել եմ ներգրավվել տարբեր կամավորական աշխատանքներում, որ փորձեմ չմտածել վատի մասին, որ անընդհատ ծանրաբեռնվում էինք տարբեր աշխատանքներում՝ պարենի հավաքագրում, արցախցիներին բնակարանով ապահովում և այլն: Այսինքն տարբեր աշխատանքներ էինք իրականացնում, որ օրինակ ժամանակ չունենայի մտածելու [ընդգծումը հեղինակինն է], որ ինչ-որ վատ բան կարող է լինի:*

Մեջբերում երիտասարդների հետ խմբային քննարկումից

Ինչպես ցույց տվեցին հետազոտության արդյունքները, պատերազմի ընթացքում երիտասարդները հիմնականում կենտրոնացել են առօրյա գործողությունների վրա՝ ճնշելու համար անհանգստությունը, մի մասը լավատեսորեն էր տրամադրվել: Ինչպես նշում է Գիդենսը, լավատեսությունը և կենտրոնացումը առօրյա գործողությունների վրա անհանգստությունը ճնշելու համար ռիսկային իրավիճակներում դիմագրավելու գործողության տիպերից են [14]:

Հետազոտության արդյունքները վկայում են առ այն, որ ՀՀ երիտասարդության լայն շերտերի մոտ նկատվում է խորը ադապտացիայի տարբերակը հետպատերազմյան պայմաններին:

Պատերազմից հետո երիտասարդները նշեցին, որ այլևս նրանք չեն կարող լինել այնպիսին, ինչպիսին էին մինչ պատերազմը: Հատկապես պատերազմական գործողություններում ներգրավված երիտասարդներին բնորոշ է խորը հարմարումը:

*Այսինքն 20 թիվը շատ ընտանիքներում կոնստանտ 20 թիվ էլ մնալու է, անկախ նրանից կյանքիդ որակը կփոխվի, չի փոխվի, ինչ կլինի, եթե կա մարդկային կորուստ, դա բնականաբար այն ընտանիքներում, որտեղ եղել են մարդկային կորուստ, այդ ընտանիքներում երջանկությունը, կյանքի նախկին գույները և այլն այլևս առաջվանը չեն լինում:*

Մեջբերում երիտասարդների հետ խմբային քննարկումից

*...դրանք իմ ամենացավոտ ու ամենատրջանիկ 12 օրերն են եղել: Հասկանալի է՝ ցավոտոր որն է. կորցրել եմ իմ ընկերներին, կորցրել ենք շատ հերոսներ, ուրախանալին էլ այն է, որ սրանից առաջ չգիտես ամեն ինչի արժեքը, արդեն իմանում ես թեև ուղի չոր հացի արժեքը, երբ հացի չոր փշուրով կարողանում ես ի սրտե ուրախանալ: Մեր կյանքում մենք բոլորս պետք է մեր երեխաներին դաստիարակենք, որ ամենահիշտը այն է, որ ցանկացած մարդու արժեքը իմանան, ոչ թե գինը, այլ արժեքը: Պատերազմն այն օրերն էր, որ մարդիկ կարողանում են իմանալ ամեն ինչի արժեքը:*

Մեջբերում երիտասարդի հետ անհատական հարցազրույցից

Երիտասարդների շրջանում խորը հարմարման մյուս դրսևորումներից նշանակալի փոփոխություններն են, որ տեղի են ունեցել նրանց կյանքում, այսպես՝ եթե պատերազմի առաջին օրերին շատերի մոտ գերիշխել է խուճապի զգացողությունը, ապա պատերազմից հետո երիտասարդները նշում էին, որ ձեռք են բերել սթրեսակայունություն:

*...որովհետև եթե օրինակ հիմա լինում են սահմանային լարումներ, զարմանալի է, բայց խուճապի չենք մատնվում, փորձում ենք առաջին անհրաժեշտության պարագաները ամեն դեպքում մոտքի մոտ թողնել, հերթական անգամ ճշտել ապաստանի տեղը, վիճակը, բաց է փակ է և այլն: Ես, համեմայն դեպս, խուճապի չեմ մատնվում:*

Մեջբերում երիտասարդների հետ խմբային քննարկումից

Պատերազմական գործողությունների վերաբերյալ ճշգրտված տեղեկատվության ստացման ցանկությունը նպաստել է նաև երիտասարդների շրջանում մեդիագրագիտության մակարդակի աճին: Չնայած դեռևս այս իմաս-

տով երիտասարդները խոցելի են, ինչի մասին խոսում են նաև փորձագետները, սակայն պատերազմից հետո երիտասարդները բարձրաձայնում են հավաստի տեղեկատվության ստացման կարևորության մասին: Ճշգրիտ տեղեկատվության ստացման պահանջի գիտակցումը կարելի է կապել նաև համընդհանուր սոցիալական վստահության ճգնաժամի հետ [21, էջեր 3-21]: Հետաքրքրական է, երիտասարդական այլ ուսումնասիրությունները ևս վկայում են, որ երիտասարդների մեծ մասը (69%) նշել է, որ կորցրել է վստահությունը վաղվա օրվա հանդեպ [2]:

*Պատերազմը ինձ սովորացրեց, որ չպետք է հավատամ ամեն ասվածին, ուշադիր լինեմ ապատեղեկատվությանը [ընդգծումը հեղինակին է], խուճապի չմատնվեմ, ճիշտ քայլերի դիմեմ:*

Մեջբերում երիտասարդի հետ անհատական հարցազրույցից

Պարտադրված ադապտացիան առաջ է բերում մի ֆենոմեն, որը կրում է հարմարվողական ասիմետրիա՝ երբ հարմարվողի գիտակցումը և վարքը չեն համապատասխանում միմյանց: Հետևաբար, դժվար է այժմ ամբողջությամբ և համապարփակ չափել, թե վարքային ինչպիսի փոփոխություններ են տեղի ունեցել հետազոտության մասնակից երիտասարդների շրջանում, քանի որ այժմ հստակ է այդ այդ ասիմետրիան: Սակայն վարքային մի փոփոխություն կարելի է մատնանշել՝ խոսքը կամավորական աշխատանքի մասին է: Նախկինում կամավորական աշխատանքը և կամավորական գործունեությունը բավականին քիչ էր տարածված երիտասարդների շրջանում [1], սակայն հետազոտության մասնակից երիտասարդների հիմնական մասը նշում էին, որ կատարում են կամավորական աշխատանքներ կամ ներգրավված են կամավորական գործունեության մեջ:

*Ինձ համար՝ ես սկսեցի ոնց որ սպրեղ էս կյանքը ու ես իմ խնդիրը տեսնում եմ ուրիշների մեջ, որ ուրիշները չեն ապրում էս կյանքը: Կարաս սպրեղ էս կյանքը թեև ուղի ֆինանսապես բարդ իրավիճակում, միջին իրավիճակում, հարուստ... ես հարուստներ գիտեմ, որ իրանք իրանց կյանքը չեն ապրում, ես էդ սպրեղու խնդիրը տեսնում եմ հիմա ուրիշների մեջ ու ես հիմա ապրում եմ իմ կյանքը:*

Մեջբերում երիտասարդների հետ խմբային քննարկումից

Վարքային մյուս փոփոխությունը, որը կարելի է մատնանշել՝ դա ֆինանսական անկախության ձեռք բերման համար առավել վաղ տարիքից աշխատաշուկա մտնելու փաստն է: Եթե նախկինում, մինչ պատերազմը, երիտասարդների հիմնական մասի շրջանում առաջին աշխատանքային փորձը սկսվում էր 23 տարեկանից, ապա այժմ երիտասարդները առավել վաղ են սկսում աշխատել՝ սկսած 18-19 տարե-

կան, ինչը նաև կրում է սեփական ներուժը ավելի ավելի վաղ բացահայտելու, ֆինանսական անկախություն ձեռք բերելու, հաճախ նաև ստեղծագործական աշխատանք կատարելու նպատակ:

*Նպատակներն ավելի են շատացել, հատկապես հայրենական գործեր կատարելու առումով, ֆինանսական խնդիրները երբ լուծեն, կկարողանան նաև նպատակներն կատարել:*

Մեջբերում երիտասարդի հետ անհատական հարցազրույցից

Հատկապես դեպրիվացիոն աղապատացիան դրսևորվում է երկարաժամկետ պլաններ չկազմելով:

*Բնականաբար, երկարաժամկետ պլաններ մեր երկրում հիմա շատ դժվար է ունենալ, որովհետև ամեն պահի քո բնակության պահը կարող է փոխվել, քո ընտանիքի կազմը կարող է փոխվել, ինչքան էլ դա դաժան է՝ կրճատվելու առումով: Ես աշխատում եմ, ոչ մի հեռանկար, նպատակ չէեղարկեմ, բայց ամեն դեպքում հիմա մեծամասնությունն ազնի սպրում ենք օրով...*

Մեջբերում երիտասարդների հետ խմբային քննարկումից

Հետաքրքրական էր, որ սովորող երիտասարդների և գործազուրկ երիտասարդների մոտ նկատելի է սոցիալական աղապատացիայի մոդելների տարբերակում: Եթե գործազուրկ երիտասարդների շրջանում ավելի դրսևորվում է դեպրիվացիոն տիպը, ապա ուսանողների մոտ՝ փոխհատուցող տիպը, որը դրսևորվում է նպատակների ձևափոխման, փոխարացման միջոցով: Ուսանողների մի մասը աշխատում էր, նույնիսկ ոչ իր մասնագիտությամբ, ֆինանսական անկախություն ձեռք բերելու նպատակով, իսկ գործազուրկ կամ տնտեսապես ոչ ակտիվ երիտասարդները (NEET<sup>2</sup>) հիմնականում ունեն միգրացիոն հակումներ կամ նպատակների, հավակնությունների կրճատում, խոսքը հատկապես պատերազմին մասնակցած տղաների մասին է:

*Բոլորից հույսս կորել է: Ուզում եմ մենակ մի աշխատանք ունենալ, որ գոյատևեմ, չեմ ասում սպրեմ:*

Մեջբերում պատերազմի մասնակցած երիտասարդի հետ հարցազրույցից

*Շատերը հակված են արտագաղթել Ռուսաստան, կամ այլ երկիր աշխատելու համար: Այսօր հիմնականում այդ խնդիրն է, և բոլորը ուզում են դուրս գալ Հայաստանից: Կոնկրետ ես չեմ հարմարվում այստեղ, ուզում եմ սպրել Ռուսաստանում, վատ չէր լինի կրթություն ունենալ: Նպատակս է թեկուզ հեռակա կրթություն ունենալ, դասավորել գործերս, բայց հարցի լուծումը տեսնում եմ ոչ Հայաստանում:*

Մեջբերում երիտասարդների հետ խմբային քննարկումից

Հետազոտությունը ցույց տվեց նաև, որ երիտասարդների մոտ նկատվում է արժեքային համակարգի փոփոխություն: Եթե նախկինում, նյութական բարեկեցությունը դիտվում էր որպես հիմնական նպատակ և արժեք [3], ապա այժմ երիտասարդները սկսել են կարևորել ընտանեկան, ընկերական հարաբերությունները, ձգտում են իրենց ժամանակի հիմնական մասը անցկացնել իրենց համար վստահելի հարաբերություններում:

*...մտնում ես տուն, գիտես՝ քեզ սպասող կա, ասում են՝ ինչ կա, ոնց ես, դու էդ պահից երջանիկ ես: Էն ժամանակ էլ դու երջանիկ էիր, բայց ուշադրություն չէիր դարձնում, որ քեզ սպասող կար, անհանգստանում ա մեկը քո համար, դու ուրախ ես, որ մեկը քո համար անհանգստանում ա, հարցնում ա ոնց ես, ունես ընկեր, որի հետ կարաս կիսվես...*

Մեջբերում երիտասարդների հետ խմբային քննարկումից

Հետազոտության մասնակիցների շրջանում նաև կարելի է նկատել սեփական կյանքը տնօրինելու, անկախություն ձեռք բերելու միտումը, ինչը մինչ պատերազմը հիմնականում պայմանավորված էր ֆինանսական անկախությամբ: Սակայն այժմ, ինչպես ցույց տվեցին հետազոտության արդյունքները, անկախ ֆինանսական անկախությունից, երիտասարդները ցուցաբերում են մտավոր անկախություն՝ որոշում կայացնելու ինքնուրույնություն և հետևողականություն:

*Եթե ես ուզում եմ, որ իմ օրը լավ անցնի, ես իմ օրը անում եմ նեղ, ոնց պլանավորել էի: Բհարկե, ծնողներին խոսքը հարգում եմ, բայց էնպես եմ անում, որ ինքն էլ իմանա, որ ես իմ կյանքն ունեմ ու սենց մի գիծ, որ ուզում եմ ես անեմ էլ ամեն ինչը:*

Մեջբերում երիտասարդների հետ խմբային քննարկումից

Հետազոտությունը ցույց տվեց, թե ինչպիսի վերափոխումների են ենթարկվել երիտասարդները հետպատերազմյան իրականությունում, ինչպես են փոխվել նրանց արժեքները, նպատակադրումները, պրակտիկաները:

### **Եզրահանգումներ**

Հետպատերազմյան իրականությունը նշանակալի ազդեցություն է թողել երիտասարդության վրա՝ ստեղծելով լուրջ մարտահրավերներ հարմարվելու արդի իրողություններին:

Արդի Հայաստանը բնութագրող իրողությունների թվին պետք է դասել նախ և առաջ մեդիա իրականությունը, ապագայի հանդեպ անորոշությունը, անվստահությունը, երկարաժամկետ պլանավորման բացառումը:

Սոցիալական աղապատացիայի սոցիոլոգիական իմաստավորումը հնարավորություն է

<sup>2</sup> Non education, employment and training.

տալիս բացահայտել, թե ինչպիսի ադապտացիայի մոդելներ են կիրառել երիտասարդները հետպատերազմյան իրականությունում: Գերիշխող մոդելներից են դեպրիվացիոն և ընդօրինակող տիպի հարմարումները:

Հետազոտության մասնակից երիտասարդների շրջանում դժվար է ուրվագծել հարմարման գերիշխող տիպ, սակայն գործազուրկ, պատերազմի մասնակից երիտասարդների շրջանում հիմնականում տարածված են դեպրիվացիոն և ընդօրինակող տիպի ադապտացիան: Իսկ ուսանողների, զբաղված երիտասարդների շրջանում նկատելի է փոխհատուցող տիպի ադապտացիան:

### Օգտագործված գրականության ցանկ

1. **Փայտյան Մ.**, «Երիտասարդների մասնակցության հարթակները ՀՀ կրթական համակարգում, Լրաբեր Հայ-ռուսական համալսարանի սերիա՝ հումանիտար եվ հասարակական գիտություններ, (34) ՀՈՀ հրատարակչություն № 1/2020
2. Գյումրիի երիտասարդների իրավիճակի վերլուծություն, Գյումրու Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն, Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոն, 2021թ.
3. Մարդկային զարգացման ազգային զեկույց 2018/2019, Ապագա ունենալու իրավունքը. Հայաստանը վերափոփոխ երիտասարդությունը, Հայաստան 2019:
4. **Նալչաջյան Ա. Ա.**, Սոցիալական հոգեբանություն, Եր., Չանգակ-97, 432 էջ:
5. История социологии в Западной Европе и США. Ответственный редактор — академик РАН Г. В. Осипов. — М.: Издательство НОРМА (Издательская группа НОРМА—ИНФРА • М), 1999. — 576 с., 269—274
6. **Корел Л. В.** Социология адаптации: вопросы теории, методологии и методики, Новосибирск, 2005. - 424 с.
7. **Мертон Р.** Социальная теория и социальная структура: пер. с англ. — М.: АСТ: АСТ Москва: Хранитель. 2006. — 873 с.;
8. **Парсонс, Т.** О структуре социального действия. — М.: Академ. Проспект. 2000. — 880 с.;
9. **Тоффлер Э.** Футурошок. — СПб.: Лань, 1997. Главы 1—5, с.5—73, 84—87
10. **Ходаков А. И.** Социально-психологические условия адаптации молодого рабочего в производственном коллективе: Автореф.дисс. канд. пед. наук. — Л., 1976. — 24 с.
11. **Cieslik, M., & Pollock, G.** (2002). Young people in risk society: The restructuring of youth identities and transitions in late modernity. Burlington, VT: Ashgate.
12. **Devlin M.**, Theorising ‘youth’, Blackhall Publications, 2009, Ireland pp 33-56. ISBN 978-1-84218-173-7
13. **Eisenstadt S. N.**, From Generation to Generation: Age Groups and Social Structure, First published in 1956 by Routledge Reprinted in 1998, 2001 by Routledge 2 Park Square, Milton Park, Abingdon, Oxon, O X 14 4R N, էջ 21
14. **Giddens A.** Consequences of Modernity. — Cambridge, 1990
15. **Graça M.**, Impact of Armed Conflict on Children: Report of the Expert of the Secretary-General, Submitted Pursuant to UN General Assembly Resolution 48/157, UN, New York, 1996
16. **Jakubowicz, A.** Psychological adaptation in Encyclopaediae Universalis., 2002, (p. 247-250)
17. **Moran, E.F.** Human adaptability (2nd edition). Boulder, CO: Westview Press, 2000, 446 p.
18. **Parsons, T.** The Social System. London: Routledge & Kegan Paul Ltd, 1970.
19. **Philips L.** Human adaptation and his failures. Academic Press, N-Y&London, 1968.
20. **Piaget, J.** Construction of reality in the child. London: Routledge & Kegan Paul, 1957
21. **Saribekyan A.** (2022). Post-War Armenia: Crisis of Confidence and Role of Social Capital in this Context. *Bulletin of Yerevan University G: Economics*, 13 (3) (39), 3—21. <https://doi.org/10.46991/BYSU:G/2022.13.3.003>
22. **Smit, B. & J. Wandel.** Adaptation, adaptive capacity and vulnerability. *Global Environmental Change* 16, 2006. 282-292.
23. **Wadsworth, B. J.** Piaget's theory of cognitive development: An introduction for students of psychology and education. New York: McKay, 1971
24. **Taché, A.** L’adaptation: un concept sociologique systémique. Éditions L’Harmattan, 2003, 362 p.

Տճանա/Հանձնվել է՝ 16.01.2023

Քեցենզիրոճանա/Գրիախոսվել է՝ 10.02.2023

Քրինյա/Ընդունվել է՝ 15.02.2023